ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թ.

№ 16 (1153)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Մեդիագրագիտության շաբաթը Մանկավարժականում

Հայաստանում արդեն 8-րդ անգամ անց է կացվում Մեդիագրագիտության շաբաթ: Մանկավարժական համալսարանը ևս միացավ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությանը՝ նոյեմբերի 8-15-ը անցկացնելով մեդիագրագիտության հագեցած շաբաթ:

Նոյեմբերի 10-ին շաբաթը մեկնարկեց՝ «Մեդիագրագիտության և պատասխանատու թվային քաղաքացիություն» խորագրով: Համալսարանի տարբեր ֆակուլտետներում ու ստորաբաժանումներում, համալսարանական դպրոցներում շաբաթն ընթացավ հագեցած օրակարգով՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանի հետ ռադիոզրույցից մինչև համակցված դասեր ու առցանց քննարկումներ, խաղային ծրագիր-վիկտորինաներից մինչև հանդիպումներ մեդիագրագիտության առաջատար մասնագետների հետ, էսսեների մրցույթներից մինչև կրթության մեջ արհեստական բանականության խնդիրներ, տեսահոլովակների մրցույթից մինչև ռադիո Ֆամայի տեղեկատվություն:

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՕՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆՆ ԷՐ

Մեդիագրագիտության շաբաթվա շրջանակում նոյեմբերի 13-ը նախադպրոցականներինն էր՝ համալսարանում ներկայացնելու իրենց գիտելիքները մեդիագրագիտությունից: Այդ համատեքստում տեղի էր Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Արմենուհի Մանուկյանի խոսքը. «Այսօր յուրօրինակ տոն է մեր համալասարանում՝ մեդիագրագիտության շաբաթվա շրջանակներում տոնում ենք նախադպրոցական մանկավարժության համակարգում մեդիագրագիտության ներդրման և կիրառման տոնը»:

Համալսարանի երրորդ հարկի նախասրահում Սկզբնական կրթության ֆակուլտետի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության բակալավրիատի 1-4-րդ կուրսերի ուսանողները ներկայացրել էին դիդակտիկ նյութերի հրաշալի ցուցահանդես:

ՀՀ ԿԳՄՍ նախարար, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանն այցելեց Մանկավարժական, նախ ծանոթացավ ուսանողների ստեղծագործական աշխատանքներին, ապա մասնակցեց շաբաթվա շրջանակում կազմակերպված միջոցառմանը: Նախարարը ողջունեց մեդիագրագիտության շաբաթին միանալու բուհի պատրաստակամությունն ու կազմակերպած միջոցառումների շարքը, ապա խոսեց ուսումնական հաստատություններում մեդիագրագիտության բավարար իրավիճակ ունենալու մասին, ինչը առաջին հերթին նշանակում է, որ «Մանկավարժական համալսարանում պետք է համապատասխան կարողություններով, գիտելիքներով և հմտություններով օժտված կադրեր պատրաստել, որոնք այնուհետև կկարողանան աշխատել մանկապարտեզներում, դպրոցներում, այլ ուսումնական հաստատություններում՝ ստեղծելով ու փոխանցելով անհրաժեշտ միջավայր՝ մեդիագրագիտության խիստ կարևոր կարողունակությունը զարգացնելու համար»:

> Գիտելիքը գանձ է, բայց նրա բանալին պրակտիկան է:
>
> *Թովմաս Ֆուլեր*
>
> Գիտելիքը զրահ է բոլոր դժվարությունների դեմ:
>
> *Ռուդաքի*

Շնորհավոր Գիտության միջազգային օրը

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆԻ ուղերձը

Սիրելի՛ գործընկերներ, դասախոսներ, ուսանողներ և գիտության նվիրյալներ, սրտանց շնորհավորում եմ Գիտության միջազգային օրվա առիթով: Այս տոնն առանձնահատուկ հնարավորություն է արժևորելու գիտության դերը մեր երկրի և մարդկության ապագայի ձևավորման գործում: Գիտությունը ոչ միայն գիտելիքի աղբյուր է, այլև մտածողության, ստեղծարարության և առաջընթացի մշակույթ, որն էական ազդեցություն ունի կրթության և հասարակության զարգացման վրա:

Մեր համալսարանը մշտապես եղել և մնում է գիտության տարածման, նորարարական գաղափարների ստեղծման վայր՝ միաժամանակ ընդառաջ գնալով ժամանակակից աշխարհի գիտական զարգացումներին: Գիտության աննախադեպ առաջընթացի ժամանակաշրջանում գիտական զարգացումներին համահունչ քայլելը երկրի զարգացման մարտահրավերներին գիտությամբ դիմակայելու և առաջընթաց ապահովելու երաշխիքն է:

Մենք հավատում ենք, որ գիտության ու կրթության միասնությամբ կարող ենք ձևավորել ազատ, քննադատաբար մտածող և պատասխանատու քաղաքացի, որը կարող է իր ներդրումն ունենալ երկրի կայուն և լուսավոր ապագայի կերտման գործում: Թող այս օրը նոր ուժ ու ներշնչանք պարգևի բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքի ուղին կապել են գիտության հետ: Մաղթում եմ նորանոր հայտնագործություններ, գիտական հաջողություններ և անսպառ ստեղծագործական ոգի:

Շնորհավոր Գիտության միջազգային օրը:

Սիրելի՛ ուսանողներ

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ: Այս օրը ոչ միայն տոն է, այլ նաև հիշեցում այն կարևոր և պատասխանատու առաքելության մասին, որ կրում է յուրաքանչյուր ուսանող. կրթվել, զարգանալ և լինել այսօրվա և վաղվա հասարակության հենասյուներից մեկը:

Մանկավարժական համալսարանը գիտելիքի, գաղափարների և ստեղծարար մտածողության մեծ ընտանիք է, և այդ ընտանիքի ամենաակտիվ ու կենսունակ մասը դուք եք: Մեր կրթական միջավայրը կառուցվում է հենց ձեր հետաքրքրասիրությամբ, ձեր համարձակ նախաձեռնություններով և ձեր պատրաստակամությամբ՝ դարձնելու աշխարհը ավելի խաղաղ ու մարդասեր:

Այսօր աշխարհը կանգնած է նոր մարտահրավերների առաջ, և դրանց հաղթահարման ճանապարհը սկսվում է կրթությունից: Դուք եք այն ուժը, որը կարող է կրթության միջոցով ձևավորել գիտակից, ստեղծագործ և համերաշխ հասարակություն: Ես վստահ եմ, որ դուք այդ պատասխանատվությունն արժանապատվորեն կկրեք:

Թույլ տվեք ևս մեկ անգամ ընդգծել՝ համալսարանը ձեր տունն է: Մենք շարունակելու ենք ստեղծել ապահով միջավայր՝ նոր հնարավորություններով, որտեղ ձեր յուրաքանչյուր ձայն կլինի լսելի, յուրաքանչյուր գաղափար՝ կարևոր, յուրաքանչյուր երազանք՝ հնարավոր:

Սիրելի՛ ուսանողներ, ցանկանում եմ, որ ձեր ուսանողական տարիները լինեն լեցուն իմացության, ընկերության, ինքնաճանաչման և հաղթահարումների պահերով: Թող ձեր ակնածանքն ու սերը մասնագիտության հանդեպ դառնան ձեր ուժեղ կողմը, իսկ ձեր նպատակներին հասնելու ճանապարհը՝ ոգեշնչող օրինակ մյուսների համար:

Շնորհավո՛ր տոնդ, սիրելի՛ ուսանող:

Թող կրթության ճանապարհը լինի ձեր մեծ հաղթանակների սկիզբը:

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ Մանկավարժական համալսարանի Գիտական խորհրդի հերթական նիստը: Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը, որն առաջին անգամ էր մասնակցում համալսարանի Գիտական խորհրդի նիստին, ողջունեց ներկաներին և կարևորեց պրոֆեսորադասախոսական կազմին՝ ասելով՝ սա մի միջավայր է, որտեղ կայացվում են կարևոր որոշումներ ի նպաստ բուհի: Նա հույս հայտնեց, որ այսուհետև էլ կպահպանվի համագործակցային այդ միջավայրը՝ նպաստելով համալսարանի գիտակրթական մտքի զարգացմանը՝ իր կայացրած որոշումներով պայմանավորելով համալսարանի զարգացումները:

Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց ամսվա հոբելյարներին՝ Յուրի Յուզբաշյանին, ում կենսագրությունը 60 տարի կապված է Մանկավարժական համալսարանի հետ, Արտակ Սահրադյանին, Մելս Մկրտումյանին, Արմեն Աբգարյանին, Ժաննա Խաչատրյանին և Աշոտ Մինասյանին:

Օրակարգում լսեցին համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնող միակ թեկնածուի՝ Ռիտա Գևորգյանի ընտրության հարցը: Վերջինս հանգամանորեն ներկայացրեց ամբիոնի առաքելությունը, գործունեության ուղղությունները, կառավարման և որակի նոր մեխանիզմների ներդրման, կրթական ծրագրերի, արտաքին կապերի, գիտահետազոտական գործունեության, ամբիոնի ուժեղ և թույլ կողմերի, ռազմավարական ուղենիշների ու նպատակների, կառավարման տարբեր գործընթացների մասին:

Փակ գաղտնի քվեարկությամբ Ռիտա Գևորգյանն ընտրվեց Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնում:

Օրակարգի 2-րդ հարցով անդրադարձան գիտական կոչումների հավակնող թեկնածուներին. հարցը ներկայացրեց համալսարանի գիտական քարտուղար և պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը:

Փակ քվեարկությամբ դոցենտի պաշտոններում ընտրվեցին Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիլիթ Կարապետյանը և Կերպարվեստի ամբիոնի դասախոս Նաիրա Մխիթարյանը:

Զեկուցումով հանդես եկավ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը: Նա ներկայացրեց 2026-2027 ուսումնական տարվա բակալավրի, մագիստրատուրայի և նախապատրաստական բաժնի մասնագիտությունների ընդունելության ուսման վարձերի մասին հարցը:

Նաիրա Սաֆարյանը ուրախությամբ փաստեց՝ համալսարանը նախորդ տարիների համեմատ ուսանողների աճ է գրանցել՝ 1500 շրջանավարտների փոխարեն բուհ է ընդունվել 1958 ուսանող, որն, իհարկե, հուսադրող ցուցանիշ է:

Պրոռեկտորը ներկայացրեց նաև նոր մասնագիտությունների մասին. մագիստրատուրայում ներառվել է «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» կրթական դասընթացը, «Պատմություն» առարկայի դիմորդներն էլ հնարավորություն կստանան քննություն հանձնել նաև այլ առարկայից, որով կկարողանան ընդունվել համալսարանի նման այլ մասնագիտություններով բաժիններ:

ԲՏԵՄ մասնագիտությամբ հեռակա ուսուցման համակարգի դիմորդներն էլ հնարավորություն ունեն ընդունվել մեկ քննությամբ:

Գիտական խորհուրդը հրատարակման երաշխավորեց երկու գիրք՝ Նաիրա Սաֆարյանի «Ավագ դպրոցի կառավարման համակարգի զարգացման ուղիները» ուսումնամեթոդական ձեռնարկը և Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Քնարիկ Աբրահամյանի «Գրական ազդեցությունների խնդիրները արևմտահայ նամակագրության մեջ»:

Մեդիագրագիտության շաբաթը Մանկավարժականում

➢1 «Ոլորտի բովանդակային բարեփոխումներում մեդիագրագիտությունը շեշտվում է որպես առանցքային կարողունակություն և ներառված է ինչպես հանրակրթության պետական չափորոշչի, այնպես էլ նախադպրոցական չափորոշչի առանցքային կարողունակություններում»,-ասաց նախարարը՝ շեշտելով, որ չպետք է մտածել, թե նախադպրոցական տարիքը վաղ է որևէ թեմայի շուրջ խոսակցություն սկսելու համար:

Մատնանշելով նախասրահում բացված ցուցահանդեսը՝ նա նշեց, որ մեթոդներն ու միջոցները բազմազան են, և մանկավարժական մոտեցումները յուրաքանչյուր տարիքի համար կարող են ձևավորվել:

Ժաննա Անդրեասյանը նաև կարևորեց միջոցների և գործիքների ընտրման ժամանակ աշխարհից չկտրված լինելը, որովհետև կրթական համակարգի խնդիրներն ընդհանուր են աշխարհի տարբեր երկրների կրթական համակարգերի համար, շեշտելով, որ փորձի փոխանակումը, համատեղ աշխատանքը միջազգային գործընկերների հետ փոխադարձաբար ուժեղացնում է մեզ՝ նաև ցույց տալով

այլոց փորձից սովորելու հնարավորությունները:

Նախարարը կարևորեց նաև սեփական փորձը՝ ընդգծելով, որ Մանկավարժականն այն ճանապարհով է գնում, որ տեսական մանկավարժական մոտեցումները այնուհետև փորձարկում է բազային ուսումնական հաստատություններում, և հուսով է՝ այդ փորձը ուսումնասիրվում և վերլուծվում է, որի արդյունքում ակնկալում է ճիշտ գործիքներ ներդնելու առաջարկություններ:

Նա լիահույս է՝ Մանկավարժականը պետք է լինի մանկավարժության ոլորտում նորարարությունների և նոր գործիքակազմի ակտիվ ջատագով: Նախարարը շնորհակալություն հայտնեց բուհին՝ մեդիագրագիտության վերաբերյալ աշխատանքը տեսանելի դարձնելու, նաև ուսանողներին և դասախոսական կազմին, այլ շահառուներին այս կարևոր խոսակցության շուրջ համախմբելու համար:

Ժաննա Անդրեասյանը հույս հայտնեց՝ մեդիագրագիտության ճանապարհին կգրանցենք նոր արդյունքներ, իսկապես մեդիագրագիտությունը դառնում է մարդու ընդհանուր գրագիտության չափորոշիչ՝ սկսած նախադպրոցական տարիքից, որպեսզի վստահ լինենք՝ երեխաները ճիշտ ճանապարհով իրենց կարողությունները զարգացնելով առաջ են գնում:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը վստահեցրեց, որ մեդիագրագիտության շաբաթվա շուրջ Մանկավարժական համալսարանը փորձեց համախմբել կրթության ոլորտի յուրաքանչյուր շահառուի: Նա կարևորեց մեդիակրթության շաբաթը, որովհետև ժամանակակից աշխարհում փոխվել է յուրաքանչյուրի կյանքը. մարդիկ ապրում են իրական և թվային աշխարհում: Լիլիթ Մկրտչյանը շեշտեց՝ յուրաքանչյուրիս համար խիստ կարևոր է ձևակերպել, կազմակերպել, ունե-

նալ համապատասխան հմտություններ թվային աշխարհում ապրելու և հասկանալու համար՝ որտեղ են սկսվում մեր իրավունքներն ու պարտականությունները:

Ռեկտորի պաշտոնակատարն ընդգծեց, որ այդ հմտություններն սկսվում են ամենափոքր տարիքից, որովհետև երեխաները բոլորից լավ ներառվում են թվային աշխարհում ու նաև նրա ազդեցությամբ: Ձևավորվում է մի արժեհամակարգ որի շուրջ մեծերը պետք է մտածեն՝ ինչ անելիք ունեն ապագայի քաղաքացի ձևավորելու գործում:

Յուրաքանչյուրն այստեղ անելիք ունի, իսկ շաբաթվա միջոցառումների շարքը նաև միջավայր է, որտեղ մարդիկ միմյանց հանդիպում են, ծանոթանում, գաղափարներ ու մտքեր փոխանակում՝ դրանք կյանքի կոչելու համար:

Ամբիոնի վարիչ Արմենուհի Մանուկյանը տեսապատկերների միջոցով ներկայացրեց նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի գործունեությունը՝ կապված մեդիակրթական և գործընթացների ներդրման հետ: Ամբիոնի շրջանակներում իրականացվում է երեք դասընթաց՝ մեկը՝ բակալավրիատի, երկուսը մագիստրոսական կրթական ծրագրերում: Ըստ ամբիոնի վարիչի՝ յուրաքանչյուր դասընթաց ուղղված է ոչ միայն նախադպրոցականների ոլորտային զարգացմանը, այլ նաև այն կարողունակություններին, որոնք սահմանված են նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչում:

Մտածական և ճանաչողական խաղերով մեդիաքվեստ ներկայացրեց ուսանողուհի Անի Ղարիբյանը, իրենց մեդիաողջույնը ներկաներին հղեցին Զոլաքարի մանկապարտեզի սաները և «Արև օր» զարգացման կենտրոնի սաները:

Մեդիագրագիտության շաբաթը Մանկավարժականում

ԱՌՑԱՆՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Շաբաթվա շրջանակում, առցանց ձևաչափով, անցկացվեց դասախոսություն-քննարկում Հատուկ կրթության ֆակուլտետի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների համար՝ «Մեդիագրագիտություն և պատասխանատու թվային քաղաքացիություն» թեմայով:

ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լուսինե Պողոսյանը ներկայացրեց ուղերձի ամենամյա շեշտադրումները՝ մեդիագրագիտությունը ոչ միայն հմտություն է, այլև քաղաքացիական և ժողովրդավարական մշակույթի բաղադրիչ, որը ձևավորում է պատասխանատու, քննադատական մտածողություն ունեցող, էթիկական ուղղվածությամբ քաղաքացի:



Բանախոսը հանգամանորեն ներկայացրեց մեդիագրագիտության հիմնական հասկացությունները՝ Մեդիա, մեդիագրագիտություն, թվային գրագիտություն, թվային քաղաքացիություն, մեդիամանիպուլյացիա և ֆեյք նյուզ, այնուհետև անդրադարձավ բաղադրիչներին:

Լուսինե Պողոսյանը գաղտնազերծեց մեդիագրագիտության տեսական հիմքերը՝ ամերիկացի գիտնական և մանկավարժ, մեդիագրագիտության ոլորտի աշխատող Ռենե Հոբբսի հայացքով:

Մեդիայի դերն ու նշանակությունը, բացասական հետևանքները, մեդիագրագիտությունը որպես ինքնապաշտպանական գործիք, թվային հաղորդակցման էթիկան, նեթիկետի հիմնական սկզբունքները՝ հագեցած թեմայով դասախոսություն, որն ամփոփվեց թվային հասարակության պատասխանատու քաղաքացու կոդեքսով:

ՀԱՄԱԿՑՎԱԾ ԴԱՍ

Համալսարանական N 57 դպրոցի 6Ա դասարանում ուսուցչուհիներ Ազնիվ Բարեղամյանի և Մարիամ Գրիգորյանի նախաձեռնությամբ անցկացվեց մաթեմատիկա-երաժշտություն համակցված դաս՝ «Մեդիագրագիտությունը 21-րդ դարի հրամայական» խորագրով:

ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մեդիան և համացանցը ժամանակակից աշխարհի անբաժանելի մասն են կազմում: Յուրաքանչյուր պահի առնչվելով մեդիայի հետ՝ անհրաժեշտություն է ծագում որոշելու՝ հավատա՞լ ստացված տեղեկատվությանը, թե՝ ոչ: Հաճախ հանդիպող տպավորիչ վերնագրերը չգիտակցված կերպով ստիպում են մարդուն արագ իմանալ մանրամասներ: Վերջինս չի էլ նկատում, թե ինչպես է հայտնվում մանիպուլյացիոն ծուղակում՝ հոդվածի հուզական և արտահայտչական ազդեցության շնորհիվ:

Դեռահասների շրջանում մեդիագրագիտության մակարդակի բարձրացման նպատակով նոյեմբերի 11-ին Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ (հենակետային վարժարան) ավագ դպրոցի «Պատմություն» և «Հայոց լեզու» նպատակային առարկաների խորացված ուսուցմամբ 11-րդ դասարանի սաները մասնակցեցին մեդիագրագիտության թեմայով սեմինար-քննարկման՝ խաղային ձևաչափով, որն ուղղված էր դպրոցականների քննադատական մտածողության և տեղեկատվական միջավայրում վստահ կողմնորոշվելու կարողությունների զարգացմանը:

Ցուցահանդես՝ նվիրված բուհի հիմնադրման օրվան

Ցուցափեղկերում ներկայացված դրոշմանիշներ, առաջին օրվա ծրարներ, փոստ քարտեր՝ նվիրված բուհի պատմությանն ու կրթական ոլորտում ներդրում ունեցած հայ նշանավոր մարդկանց. Մանկավարժական համալսարանի հիմնադրման օրը խորհրդանշվեց բուհի թանգարանում դիտարժան ցուցահանդեսի ներկայացմամբ: Թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը շնորհավորեց ներկաներին բուհի հիմնադրման օրվա առթիվ և ներկայացրեց հետաքրքիր փաստեր բուհի հիմնադրման պատմությունից:

«Մանկավարժականի պատմությունն սկսվել է Հռիփսիմյան գիմնազիայի շենքից. մանկավարժական թանգարանի սրահում որոշում կայացվեց, կան նաև արձանագրություններ, Մանկավարժական ինստիտուտ բացելու մասին: 1948 թվականին թվականին էլ, Աբովյանի անհայտացման 100-ամյակի առիթով, բուհը անվանակոչվեց մեծ լուսավորչի անունով: Ներկայիս համալսարանի թանգարանն ամբողջությամբ նվիրված է բուհի պատմությանը. ֆոնդերում շատ նյութեր կան, որոնք տրամադրում ենք ուսանողներին՝ պատրաստ համատեղ աշխատելու»,-ասաց Ալվարդ Գրիգորյանը:

Ներկաներին ողջունեց ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը, շնորհավորեց բոլորին համալսարանի հիմնադրման օրվա կապակցությամբ՝ ասելով. «Ես շատ կարևորում եմ Մանկավարժական համալսարանը, ամենակարևոր բուհն է մեր պետության պատմության մեջ՝ մանկավարժ կրթելու, դաստիարակելու, արժեհամակարգ ձևավորելու գործում ունեցած ներդրմամբ»:

Լիլիթ Մկրտչյանը հասարակության ձևավորման և պետության զարգացման գործում կարևորեց ուսուցիչների դերակատարությունը. ուսուցիչն այն մարդն է, որը կապ ունի ներկայի և ապագայի հետ, ուսուցչի ձեռքում են թրծվում, ձևավորվում, կրթվում երեխաները, որոնք պետք է կրեն արժեհամակարգ՝ միտված պետության և պետականամետ մտածողության ձևավորմանը:

Որպես այդ մեծ ժառանգությունը ստացածների՝ նա կարևորեց յուրաքանչյուրի դերը, շնորհակալություն հայտնեց բոլորին իրենց կատարած աշխատանքի համար, կրթության ոլորտում շարժիչ ուժ դառնալով՝ կրթությունը առաջ տանելու գործում:

Որպես պատմաբան՝ նա հետադարձ հայացքով փաստեց՝ պետությունը նորից շատ բարդ իրավիճակի առաջ է կանգնած: Իր ժամանակին բուհերի ձևավորումը բոլորովին էլ պատահական չէր: Եվ պատահական չէր, որ Թումանյանն ասում էր՝ մեզ համալսարան է պետք, անկախ միջավայր, որը հավասար է պետությանը, որտեղ այդ սերունդը կկրթվի, կդաստիարակվի, պատրաստ կլինի պետականության արժեհամակարգը կրելու:

Ռեկտորի պաշտոնակատարը խոսեց Մանկավարժականի հիմնադրման, այնտեղ ներդրում ունեցած մարդկանց ջանքերի ու նվիրումի մասին:

Նա հորդորեց այդ ժառանգությունը ոչ միայն պահպանել ու զարգացնել՝ հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները, նաև հույս հայտնեց, որ Մանկավարժականը կդառնա աշխարհի ժամանակակից, 21-րդ դարի կրթահամակարգի մեջ իր ուրույն դերն ունեցող կրթահամակարգ:

Ցուցադրությունը Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի Քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Աշոտ Բաբախանյանի հավաքածուի հիմքի վրա էր ներկայացվել: Վերջինս, որպես օրվա հուշ, ռեկտորին նվիրեց Հայաստանի անկախության օրվա առթիվ հրատարակված առաջին նամականիշը:

Կարևորեցին պատմական մտածողության զարգացման ռազմավարությունը

«Պատմությունը միշտ ազդում է ներկայի վրա, պատմությունը թվեր չեն, կամ մեռած մարդկանց մասին պատմություններ, պատմությունը օրինաչափությունների շղթա է, որից մշտապես դասեր պետք է քաղել. Մանկավարժական համալսարանի հարկի ներքո հավաքված պատմության ուսուցիչներին կրթության փորձագետ, օրվա խոսնակ Սեդա Քոչարյանը ներկայացրեց պատմական մտածողությունը զարգացնող ռազմավարությունները: Նա խոսեց մեր պատմության խնդիրների մասին, որոնք մեզ ծանոթ են դեռևս շատ հին դարերից, ապա ներկայացրեց պատմության 6 հիմնասյուները, որոնք կարևոր են պատմագիտական մտածողության զարգացման համար, փաստերով ու օրինակներով ներկայացրեց տարբեր մոտեցումներ ու տեսակետներ, որոնք կարևոր դեր են խաղում պատմական մտածողության զարգացման գործում՝ պատմության փոփոխություն, հիշողություն, արդիականություն, շարունակականություն, էթիկական կրթություն, պատմական աղբյուրների վերլուծություն և այլն:

«Պատմություն» առարկան դասավանդող ուսուցիչների համար սեմինար ենք կազմակերպել պատմական մտածողության ձևերի վերաբերյալ, անցյալ տարի ԿՁՆԱԿ-ը մեկ տարի շարունակ ուսուցիչների համար իրականացրեց վերապատրաստումներ, և այսօր կարծես թե այդ այդ աշխատանքների ամփոփումն էր, որովհետև վերապատրաստումները հեռավար ձևաչափով էին,-ասաց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը՝ ողջունելով հանրապետության տարբեր դպրոցների պատմություն դասավանդող ուսուցիչներին Մանկավարժական համալսարանում:-Առկա ձևաչափով այս հանդիպման համար խորհրդանշական թեմա ընտրեցինք՝ պատմական մտածողությունը զարգացնող ռազմավարությունները, որովհետև պատմության դասավանդման համար ամենակարևորը պատմական մտածողություն զարգացնելն ու ձևավորելն է:

Օրը նաև խորհրդանշական է այն տեսանկյունից, որ այս հանդիպումը տեղի է ունենում Մանկավարժական համալսարանի հիմնադրման օրը, և հիշենք, որ բուհը հիմնադրվել է պատմալեզվաբանական հիմքի վրա, և շատ կարևոր էր պատմաբաններին այս օրը այս համալսարանում հավաքելը:

Քանի որ մեր երկրում փոփոխություններ են կատարվում կրթության ոլորտում, կարծում եմ Մանկավարժականը կարևոր դերակատարություն կունենա այս ոլորտում: Եվ եթե այս պահին մենք աշխատում ենք աշխատող ուսուցիչների հետ, իսկ Մանկավարժականը կրթում է ապագա ուսուցիչներին, ապա շատ կարևոր է, որ մեր բոլոր ուսանողները լինեն այս մտածողության և իմացության կրողները և այդ իմացությունն ու գիտելիքները փոխանցեն աշակերտներին»:

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը ողջունեց պատմության ուսուցիչների հետ Մանկավարժական համալսարանում հանդիպման նախաձեռնությունը՝ ընդգծելով, որ պատմագիտական մտքի զարգացումը կարևոր է ոչ միայն ուսուցիչների և աշակերտների, այլև բոլորի համար, անկախ մասնագիտությունից, որովհետև այն ձևավորում է սկզբունքներ, արժեքներ՝ տարբեր մարտահրավերների դիմակայելու համար:

Էդգար Հովհաննիսյանը փաստեց՝ պատմագիտական մտածողությունն օգնում է հասարակությանը՝ ինչու սովորել պատմություն, որովհետև այն օգնում է հաղթահարել մարտահրավերները և ճիշտ ախտահարել խնդիրները, և որ միայն այդ դեպքում կարելի է հասնել հաջողության:

Դեկանը կարևորեց ուսուցիչների հետ հետադարձ կապը՝ նրանց ծանոթացնելու օրեցօր զարգացող գիտության նորություններին և մեթոդներին, նաև պատմության պրակտիկ ուսուցիչների հետ փորձի փոխանակման համար, որովհետև փորձի փոխանակման ընթացքում հնարավոր է համատեղ լուծել խնդիրները: Ահա ինչու այս հանդիպումները պետք է շարունակական լինեն:

Պատմության ուսուցիչները բազմաթիվ հարցեր ուղղեցին Սեդա Քոչարյանին և Լիլիթ Մկրտչյանին. դրանք վերաբերում էին պատմության դասավանդման մոդուլներին, վերապատրաստումներին, դասագրքերին և այլն:

Լիլիթ Մկրտչյանը ներկայացրեց՝ մոդուլները աշխատանքային լրացուցիչ ռեսուրս են, որ հնարավորություն են տալիս նրանից օգտվել սեփական ընտրությամբ, միայն թե հասնեն վերջնարդյունքին, իսկ դասագրքերն այսօր արդեն ամբողջ աշխարհում արդիական չեն, և որ ուսուցիչը և աշակերտը կարող են ստեղծել թղթապանակներ ու աշխատել դրանցով:

«Ուսուցիչը ամենակարևոր մարդն է, և նրա ամենամեծ գործը աշակերտներին իրենց առարկան սիրել տալն է, աշակերտներին թևեր տվեք»,- ներկաներին հորդորեց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը՝ վստահեցնելով, որ նման հանդիպումները երկուստեք օգտակար կլինեն՝ թե՛ առարկան դասավանդող ուսուցիչների, թե՛ ուսուցիչներ պատրաստող համալսարանի համար:

Ծնորհավոր Ուսանողի միջազգային օրը

Սիրելի՛ ուսանողներ,

ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Ուսանողի միջազգային օրվա առթիվ: Ուսանողական տարիները կյանքի այն բացառիկ շրջանն են, երբ յուրաքանչյուր օր հնարավորություն է՝ բացահայտելու նոր հորիզոններ, ձեռք բերելու արժեքավոր գիտելիքներ և կերտելու սեփական ապագան: Այս ընթացքում ձևավորվում է անհատի մտածողությունը, հարստանում են տեսլականն ու փորձը, որոնք դառնում են ամուր հիմք մասնագիտական աճի համար:

Հատուկ ընդգծման է արժանի մեր ուսանող-զինվորների անձնվիրությունը, որոնք իրենց ծառայությամբ հնարավորություն են տալիս մեզ խաղաղ պայմաններում զարգացնել գիտելիքները և ստեղծագործել: Նրանց տոկունությունն ու նվիրումը բարձրագույն օրինակ են՝ պարտավորեցնող և ոգեշնչող: Նրանց նվիրումն ուժ է տալիս մեզ բոլորիս՝ շարունակելու մեր ուսումնական և ստեղծագործական ճանապարհը վստահությամբ և հպարտությամբ:

Մաղթում եմ ձեզ անսպառ եռանդ՝ գիտելիքի որոնման ճանապարհին, հաստատակամություն՝ ձեր նպատակներին հասնելու գործում: Թող յուրաքանչյուր ուսանող դառնա այն լույսը, որ լուսավորում է մեր երկրի ապագան:

Պարույր ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՊՄՀ Ուսանողական խորհրդի նախագահ՝

Հանդիպում գրականագետի հետ

Հովիկ Չարխչյանի հետ հանդիպման ընթացքում գրականագետը ներկայացրեց Բակունցի կյանքի առավել անհայտ կողմերը, ստեղծագործական գործունեությունը: Ներկայացվեց, որ 1917-ը բեկումնային էր Բակունցի կյանքում՝ ռազմաճակատ, հիվանդություն, վերադարձ Երևան: Խոսվեց նաև նրա լրագրողական աշխատանքի ու Մոսկվա հասնելու փորձի մասին, երբ նա հասել էր մինչև Խարկով: Նշվեց, որ այնտեղ նա հանդիպել էր քաղաքական գործիչ, պաշտոնյա Կարախանյանին, և հենց այդ շրջանում էլ ձևավորվել էր նրա կապը Աստղիկի հետ: Ներկայացվեցին Բակունցի մահվան շուրջ տարբեր վարկածներ: Իսկ վերջում ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի աշակերտները ակտիվ քննարկում իրականացրին և հարցեր ուղղեցին գրականագետ Հովիկ Չարխչյանին:

Մեդիագրագիտության շաբաթը Մանկավարժականում

Ես թվային հասարակության ապագա ուսուցիչ եմ

Մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությամբ ուսանողները մոդիագրագիտության շաբաթվա շրջանակում ներկայացրին «Ես թվային հասարակության ապագա ուսուցիչ եմ» խորագրով տեսահոլովակներ և սահիկներ: Մանկավարժության ամբիոնի և Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողական խորհրդի համատեղ նախաձեռնությունը օրվա թեմային համահունչ հետաքրքիր ուղերձներ ուներ. ուսանողները ներկայացրին իրենց դիտարկումները, թե մեդիագրագիտության ինչպիսի կարողություններ են անհրաժեշտ ժամանակակից ուսուցչին: Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների համար Մեդիագրագիտության դասընթացը վարում է Մանկավարժության ամբիոնի դոցենտ Գայանե Հարությունյանը:

Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողները հանգամանորեն ներկայացրին մեդիագրագիտության հնարավորություններն ու մարտահրավերները: Ուսանողների աչքերով ներկաները տեսան թվային հասարակության ուսուցչին:

Վարդուհի Վարդանյանը խոսեց թվային մարտահրավերների, թվային կրթական տեխնոլոգիաների, թվային անջրպետի հաղթահարման, տվյալների անվտանգության ու կիբերպաշտպանության մասին:

Զարուհի Չախոյանը վստահեցրեց՝ եթե ուսուցիչը մեդիագրագետ է, նա աշակերտներին կսովորեցնի ճիշտ օգտագործել թվային աշխարհը:

Նինա Մարտիրոսյանը, Անի Ոսկանյանը, Նոնա Կարապետյանը և Թինա Սահակյանն իրենց պատրաստած տեսահոլովակում ներկայացրին ապագայի դպրոցը՝ անդրադարձ անելով մեդիայի առավելություններին ու բացասական կողմերին, համեմատեցին մեր օրերի դպրոցի հետ՝ լիահույս, որ ոչ մի տեխնոլոգիա չի կարող փոխարինել ուսուցչին, որը մարդկային սեր ու ջերմություն է հաղորդում սովորողներին:

Անահիտ Մելքոնյանն անդրադարձավ մայրենիի ուսուցմանը նոր դարաշրջանի թվային միջավայրում՝ համոզված, որ ժամանակակից ուսուցիչը պետք է համադրի մարդկային վերաբերմունքը և թվային տեխնոլոգիաները, որ մայրենին ազգային ինքնության հիմքն է, իսկ ապագա ուսուցիչը պետք է զինված լինի թվային գործիքներով և չվախենա նորարարություններից:

«Ուսուցիչը դառնում է թվային գրագիտության փոխանցող, թեև ամենամեծ տեխնոլոգիան մարդու սիրտն ու միտքն են»,-ասաց Քրիստինե Արզումանյանը:

Ըստ Անի Եգանյանի՝ մեր օրերում անչափ կարևոր է ճշմարիտ տեղեկատվությունը տարբերել կեղծից, կարողանալ գործել անվտանգ միջավայրում, իսկ Ռոզա Սիմոնյանը տեսահոլովակի միջոցով ճանապարհորդեց դեպի 1930 թվական: Այո, մարդն ու տեխնոլոգիան կողք կողքի են՝ համատեղ հզորացնելու մեր հայրենիքը:

Առաջին կուրսի մագիստրոս Կարինե Ավալյանն էլ ներկայացրեց 21-րդ դարի կրթության նոր հորիզոնները. նա վստահեցրեց՝ իր առաքելությունն է կառուցել կամուրջ դասական կրթության հոգևոր խորությամբ և թվային դարաշրջանի արագ տեմպերի միջև, թվային աշխարհը դարձնել մարդկային, թվային տեխնոլոգիաները ծառայեցնել մարդուն:

Ձեռնարկն սկսեցին և ավարտեցին արհեստական բանականության պատրաստած հոլովակով, որտեղ ներկայացվեց ոչ միայն ինչպիսին պետք է լինի ապագայի մեդիագրագետ ուսուցիչը, այլև նոր տեխնոլոգիաներից օգտվելու ռիսկերը:

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը: Նա իր գոհունակությունը հայտնեց ուսանողների աշխատանքների վերաբերյալ, խոսեց ժամանակակից աշխարհում գիտելիք ունենալու կարևորության և ուսուցչի դերի մասին. «Աշխարհը դարձել է անտարբեր, ապրում է տարբեր ստանդարտներով, ի վնաս մարդու: Եվ այս բոլորի հիմքում ուսուցիչն է, որովհետև ուսուցիչը պետք է լինի բարոյական և բարոյական հատկանիշներով մարդ դաստիարակի: Եվ այդ մարդը ինչպիսին պետք է լինի՝ մեծապես կախված է ուսուցչի օրինակից, այն միջավայրից, որն ինքը ստեղծում է կրթության մեջ, և նրանից, թե ինչ և ինչպես է սովորեցնում»:

Ա. Թոփուզյանը փաստեց՝ այսօր հետաքրքիր մտքեր լսեցինք, ուսանողները յուրովի իրենց հոգին էին դրել, ներկայացնում էին, ինչ զգում էին և գիտեին: Նա շնորհավորեց խելացի, սկզբունքային, քննադատական մտածողություն ունեցող ուսանողներին, նաև շնորհակալություն հայտնեց դասախոսներին, որովհետև՝ «մենք մեզ տեսնում ենք ձեր մեջ»:

«Այսօր մեր ուսանողները ներկայացրին իրենց համոզմունքները՝ ուսուցիչը պատասխանատու մարդ է, ուսուցիչը պետք է հայրենասեր լինի, ուսուցիչը պետք է սերմանի հայոց լեզուն և այն արժեք դարձնի, ուսուցիչը պետք է լինի հայրենիքի անվտանգության պահողը: Բոլորի աշխատանքներում դա կար, և ես դրանով հպարտանում եմ: Իսկապես ուսուցիչը ոչ միայն գիտելիք տվող է, այլև մարդ դաստիարակող»,- ամփոփեց ամբիոնի վարիչ Աիդա Թոփուզյանը:

Հեքիաթը՝ մեդիա ներկայացմամբ

«Մենք ապրում ենք տեղեկատվական պոռթկման դարաշրջանում: Սոցիալական ցանցերը, բլոգները և վիդեոհոսթինգը դարձել են մեր առօրյայի անբաժանելի մասը: Բայց արդյո՞ք մենք միշտ գիտենք՝ ինչպես «լողալ» տեղեկատվության այս օվկիանոսում: Մեդիագրագիտությունն այն փրկարար շրջանակն է, որ օգնում է մեզ լինել ոչ թե պասիվ սպառողներ, այլ գիտակից օգտատերեր, կարողանալ քննադատաբար գնահատել տեսածն ու լսածը»,- ՀՊՄՀ 57 հիմնական դպրոցում կայացած միջոցառմանը նշեց դասվար Տաթևիկ Աբրահամյանը:

Նրա նախաձեռնությամբ՝ 4Բ դասարանի աշակերտները ներկայացրին Հովհաննես Թումանյանի «Անբան Հուռի» հեքիաթը՝ իրադարձությունները տեղափոխելով մեր օրեր: Սովորողները շատ անսպասելի և սրամիտ կերպով էին մոտեցել հեքիաթին. Հուռիին, որը հետևորդ է հավաքում, մայրիկը, որը նրան «հուրի-հրեղեն» է համարում, և մեծահարուստ ամուսինը, որը ցանկանում է «համացանցը պայթեցնել»:

Ներկայացումը զվարճալի հայելի էր, որի մեջ բոլորս կարող ենք տեսնել մեզ. որտե՞ղ է սահմանը կոնտենտ ստեղծելու և կյանքը վիրտուալ իրականությանը զոհաբերելու միջև, ինչպե՞ս տարբերակել իսկական տաղանդը պարզապես «թրենդային» լինելու ցանկությունից. «Էս բզեզն իմ մորաքույրն է: Խեղճը շատ աշխատասեր կնիկ էր: Ամբողջ օրը հեռախոսի մեջ էր ու տենց փոքրացավ, բզեզ դարձավ: Մեր ցեղն էսպես է: Շատ աշխատասեր ենք, բայց աշխատելուց պստիկանում, բզեզ ենք դառնում»,-ներկայացման ավարտը գրեթե նույնն է, ինչ՝ հեքիաթում: Միայն թե, մեդիահարուստ ամուսինն ինքն է որոշում այսուհետ Հուռիի փոխարեն բլոգ վարել, որ կինն էլ բզեզ չդառնա:

Բեմականացումն արժանացավ ներկաների հավանությանը. ծիծաղ, որ ստիպեց խորհել նաև, մեդիա տիեզերքում լինել ոչ թե «անբան Հուռի», այլ գիտակից, նախաձեռնող և պարզաբանված օգտատեր:

Մարիա ԱՂԵԿՅԱՆ

Մասնակցեցին մեդիագրագիտության շաբաթին

Մեդիագրագիտության շաբաթը եզրափակեց Մանկավարժական համալսարանում իրականացված շրջայցով թվային և մեդիամիջավայրում՝ «Սկզբնական կրթությունը և մեդիագրագիտությունը» խորագրով. այն կազմակերպել էին Սկզբնական կրթության ֆակուլտետն ու ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

Ինտերակտիվ միջոցառման մասնակիցները ծանոթացան նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում առկա մեդիագրականությանը՝ գրքեր, ձեռնարկներ, ուսումնական նյութեր, դիդակտիկ պարագաներ, միաժամանակ անմիջական մասնակցություն ունեցան և ներգրավվեցին մեդիախաղերին ու վարժանքներին, բացահայտեցին մեդիաոլորտի իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ մասնակցելով մեդիադիդակ խաղին, լրացնելով մեդիախաչբառ, մեդիաբառարան:

Ստեղծված դիդակտիկ նյութերը հնարավորություն են տալիս կիրառական միջավայրում փորձարկել մեդիագրագիտության գործիքները, զարգացնել համագործակցային ու ստեղծագործական հմտություններ, ներկայացնել լավագույն մեթոդական լուծումները, որոնք կրթական գործընթացում բարձրացնում են ուսանողների մեդիագրագիտության կարևորության գիտակցումը:

Մեդիագրագիտության շաբաթը Մանկավարժականում

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԳԻՏԵԼԻՔՆ Է

«Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի մասնագետ Անի Եղիազարյանը Մանկավարժական համալսարանում հանդես եկավ «Քննադատական մտածողություն և ապատեղեկատվություն» ինտերակտիվ դասախոսությամբ:

«21-րդ դարում ապրող ժամանակակից մարդու համար չափազանց կարևոր է տիրապետել մեդիագրագիտության հմտություններին և իմացություններին, որ կարողանա ապրել և դիտարկել ապագան,-ասաց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը:-Իսկ թվային աշխարհում ապատեղեկատվությունն ակնթարթային տարածում է ստանում. մարդն այլևս ժամանակ չունի ճշտելու, հասկանալու՝ լուրը կե՞ղծ է, թե՞ իրական»:

Լիլիթ Մկրտչյանը կարևորեց քննադատական մտածողության զարգացումը, որը յուրաքանչյուրին հնարավորություն կընձեռի կարողանալ ստուգել լուրի իսկությունը, պաշտպանել իր կյանքը, պետության համար ստեղծել անվտանգ և ապահով կրթական միջավայր:

Անի Եղիազարյանը ուսանողական լսարանի առաջ խոսեց մեդիականացված իրականությունում փաստերի ճշտման կարևորության, կեղծ լուրն իրականից տարբերակելու անհրաժեշտության մասին, նաև ընդգծեց, որ հետազոտությունները ևս փաստում են կեղծ լուրի վտանգավորությունը:

Ա. Եղիազարյանը խոսքը համեմեց հետաքրքիր օրինակներով, որպեսզի հասկանալի լինի, թե ինչպես տեղեկատվությունը կարող է անդրադառնալ մեր որոշումների, ընտրության վրա՝ այդ համատեքստում ընդգծելով մեդիագրագիտության, քննադատական մտածողության կարևորությունը:

Գաղտնազերծելով մեդիագրագիտության դերը, խնդիրներն ու ազդեցության շրջանակները՝ բանախոսն ամփոփեց՝ քննադատական մտածողության հիմքում գիտելիքն է:

«ԹՎԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿՑՎԱԾ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՑԱՆՑ»

Մեդիամասնագետ Արփինե Գրիգորյանը նոյեմբերի 12-ին Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացրեց «Թվային ինքնությունը և գիտակցված ներկայությունը առցանց» թեմայով դասախոսություն:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ընդգծեց, որ բուհն ակտիվորեն մասնակցում է հանրապետությունում անցկացվող մեդիագրագիտության շաբաթին՝ փորձելով իր շուրջը համախմբել նախադպրոցական, ուսումնական կրթության հաստատության, հանրակրթության ներկայացուցիչներին, նաև բարձրագույն կրթության մասով համագործակցել այլ բուհերի հետ:

«Ժամանակակից աշխարհում փոխվել են պայմանները, կարիքները, սկզբունքները, ինքնությունը, և մենք կարծես թե երկու ինքնություն ունենք՝ մեկը մեր իրական ինքնությունն է, մյուսը՝ թվային ինքնությունը, որը մեզանից անկախ ձևավորվում է: Թվային հարթակում մեզնից յուրաքանչյուրը ստեղծող է, և մեզանից անկախ կարողանում ենք թվային հետագիծ ստեղծել: Հետևաբար փոխվել են ժամանակակից աշխարհում ապրելու կանոնները, և մեզ համար շատ կարևոր է կանոններին համապատասխան սկզբունքներ, իմացություն, հմտություն ձևավորել՝ պատասխանատու քաղաքացի լինելու համար, և պարտավոր ենք այդ հմտությունները փոխանցել և սովորեցնել նոր սերնդին,-ասաց Լիլիթ Մկրտչյանը:- Խնդիրն այնքան մեծ է, որ Եվրոպայի խորհուրդը երեք տարի առաջ ձևավորեց մի հանձնաժողով թվային քաղաքացիական կրթության վերաբերյալ և մտածեց՝ ինչպես թվային քաղաքացիական կրթությունը ներառել կրթության բոլոր ոլորտների մեջ:

Պատահական չէ, որ 2025 թվականը ողջ Եվրոպայում հայտարարված է թվային քաղաքացիական կրթության տարի»:

Այդ համատեքստում Լիլիթ Մկրտչյանը կարևորեց օրվա հանդիպումը և բարի աշխատանքային ընթացք մաղթեց:

«Ապրի Արմենիայի» համահիմնադիր, ծրագրավորող և կիբերմասնագետ Արփինե Գրիգորյանը խոսեց թվային ինքնության և 20-րդ դարի թվային հմտությունների մասին: Բանախոսը կարևորեց նման լսարանում նպատակային թեմա ներկայացնելը և փաստեց՝ շատ հաճախ մարդիկ չգիտեն ինչպես ներկայանալ առցանց՝ իրենց թվային հետագիծը տեսնելու: Թվային ինքնությունն ավելին է, քան անձնական էջը, այն մարդու մասին ակտիվ և պասիվ թվային տվյալների ամբողջությունն է՝ վստահեցրեց նա, ահա ինչու պետք է գիտակցաբար մոտենալ գրառումներին և կիսված նյութերին, որպեսզի ուրիշների գործիք չդառնան: Գրառումներն անձի կերպարի մասն են կազմում, իսկ արհեստական բանականության մոդելների զարգացման համար չի բացառվում, որ հետագայում կարող են օգտագործել մարդկանց համացանցային պրոֆիլները: «Մարդու թվային ինքնության պատկերը ձևավորվում է իր թողած թվային հետքերի հիման վրա»,-ասաց Ա. Գրիգորյանը՝ կարևորելով թվային գրագիտությունը և լսարանին ներկայացնելով համացանցում ինքնության թվային կերտման անվտանգ քայլերը:

ՊԵՏՔ Է ԿՐԹԵԼ ՄԵԴԻԱԳՐԱԳԵՏ ՍԵՐՈՒՆԴ

Մեդիագրագիտության շաբաթվա շրջանակում Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի ուսանողների համար վարպետաց դաս վարեց «Հետք» մեդիա գործարանի փաստերի ստուգման թիմի ղեկավար Վահե Սարուխանյանը: Նա ներկայացրեց փաստերի ստուգումը (fact-checking) որպես կեղծ լուրերի (fake news) դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմ թվային ժամանակաշրջանում:

Վահե Սարուխանյանը լրագրողների հետ խոսեց մասնագիտական ոլորտում ժամանակակից մեդիա գործիքների և հավելվածների օգտագործման, կեղծ լուսանկարների, քարտեզների և տեսանյութերի բացահայտման գործիքակազմի մասին, բերեց տեքստերի ու պաշտոնական հայտարարությունների ամբողջականության խախտումների օրինակներ:

Հետքի թղթակից, իսկ 2006 թվականից «Հետք» մեդիա գործարանի փաստերի ստուգման թիմի ղեկավարը ուսանողական լսարանում ասաց, որ կեղծ լուր տարածելը շատ հին երևույթ է, որը գալիս է դեռևս մարդկային հաղորդակցման ժամանակներից, և առաջին հերթին պետք է ճշտել աղբյուրը: Սոցիալական ցանցերում ամեն տեսակ լուր տարածվում է և ունի մեծ լսարան, որտեղ փաստերի ստուգումը բավականին դժվար է: Պետք է պատրաստված լինել՝ կեղծիքը հայտնաբերելու համար: Իսկ որ ամենակարևորն է, պետք է կրթել մեդիագրագետ սերունդ:

Ցավոք, Հայաստանում շատ քիչ են փաստերի ստուգմամբ զբաղվող կազմակերպությունները՝ շուրջ երկու տասնյակ: Նրանցից մեկը «Հետք» մեդիա գործարանի փաստերի ստուգման թիմն է, որ 2020 թվականին է ձևավորվել, երբ պատերազմի ընթացքում նաև տեղեկատվական պատերազմ էր, և հասարակությունը հեշտությամբ կուլ էր տալիս կեղծ լուրերի խայծերը:

Դասընթացավարը խոսեց google որոնման համակարգի հնարքների ու փաստերի ստուգման ձևերի մասին, փաստեց, որ լրագրողները երբեմն հայտնվում են դատարաններում, և պետք է կարողանալ փաստերը ճիշտ ներկայացնել:

Ուսանողները հարցեր տվեցին «Հետք»-ի բացահայտումների և փաստերի ստուգման մասին, խոսեցին առանձին փաստերի մասին:

«Մեր լծակները լրագրողական գործիքներն են»,-ասաց մեդիափորձագետը՝ ուսանողներին ներկայացնելով, որ փաստերի ստուգման դժվարությունների դեպքում հաճախ դիմում են համաշխարհային գլոբալ մի քանի կազմակերպությունների իրենց ընկերներին:

«Հետաքննական լրագրությունը և փաստերի ստուգման հարթակը միտված են «ուժեղներին» բացահայտելու, նրանց մղելու թափանցիկ գործունեության»,-ամփոփեց Վահե Սարուխանյանը:

Ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանը և Արթուր Բաղդասարյանը շնորհակալություն հայտնեցին անչափ հետաքրքիր վարպետաց դասի համար, որը լրագրողների հետ հանդիպման լավագույն ձևաչափն էր:

Մեդիագրագիտության շաբաթը Մանկավարժականում

Մեդիադասախոսություններ՝ ոլորտի մասնագետներից

«Բաց տվյալների հասանելիությունը որպես լրագրության գործիք՝ կոռուպցիայի դեմ պայքարում» խորագրով դասընթաց՝ մեդիագրագիտության շաբաթվա շրջանակներում. Մանկավարժականում այն վարեց հետաքննող «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ Հայաստան» կազմակերպության 2023 թվականի մրցանակակիր, «Հետք» մեդիա գործարանի հետաքննող լրագրող Տիրայր Մուրադյանը:

Թվայնացված բաց տվյալների բազա, որը հասանելի է հասարակության բոլոր շերտերին, թվայնացված «կիսաբաց» տվյալների բազա, որը հասանելի է լրագրողների և լրատվամիջոցների համար, թվայնացված տեղական և միջազգային տեղեկատվական աղբյուրների օգտագործումը մեդիա արտադրանքում, թվայնացումը՝ որպես թափանցիկության ապահովման և կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր միջոց. Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի ուսանողների հետ հանդիպումն ու քննակումներն այս թեմաների շուրջ էր:

Այն հնարավորություն տվեց ապագա լրագրողներին անմիջական շփման միջոցով հասկանալ բարդ, բայց իր ազդեցությամբ կարևոր լրագրողական ճյուղի առանձնահատկությունները. ի՞նչ է հետաքննական լրագրությունն ու ինչո՞վ է այն տարբերվում լրագրության մյուս ժանրերից. «Ոլորտն առանձնանում է իր աշխատատարությամբ, հետևողականությամբ և հասարակական նշանակությամբ: Այն ուղղված է կարևոր խնդիրների բացահայտմանն ու հասարակության իրազեկմանը: Հետաքննական լրագրությունը պահանջում է համբերատարություն և մանրակրկիտ աշխատանք: Յուրաքանչյուր փաստ պետք է ստուգվի տարբեր աղբյուրներից, որ հրապարակվող նյութը լինի հնարավորինս ճշգրիտ և հավաստի»,-նշեց Տիրայր Մուրադյանն ու խոսեց նաև փաստերի ստուգման գործընթացի մասին՝ ընդգծելով, որ տեղեկատվության հավաստիությունն ու աղբյուրների վստահելիությունը ցանկացած հետաքննության հիմքն են:

Գործող լրագրողն ուսանողներին ներկայացրեց մի շարք օրինակներ նաև սեփական մասնագիտական փորձառությունից՝ խոսեց, թե ինչպես են լրագրողները կիրառում ժամանակակից մեդիագործիքներ և հավելվածներ՝ բացահայտելու կեղծ լուսանկարները, քարտեզները և տեսանյութերը:

Ապագա լրագրողները հանդիպումը կարևոր փորձառություն համարեցին իրենց համար. առավել հստակ պատկերացրին իրենց ապագա աշխատանքի ընթացքն ու պահանջները:

Մեդիագրագիտության շաբաթվա շրջանակներում զրույց-քննարկում եղավ նաև ՀՊՄՀ հենակետային վարժարանում, հյուրը՝ ՀՊՄՀ Լրագրության ամբիոնի դասախոս, Newmag հրատարակչության գլխավոր խմբագիր Գնել Նալբանդյանն էր:

Ոլորտի փորձառու մասնագետը խոսեց մեդիագրագիտության կարևորության մասին, անդրադարձավ նյութերի վերնագրերի, վստահելի աղբյուրների, լրատվամիջոցների տեղադրած նկարների, տեսահոլովակների, խտրականության, հեղինակային իրավունքի պահպանման մասին:

Հանդիպումն ընթացավ հարց ու պատասխանի ձևաչափով:

Աննա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Լրագրության 1-ին կուրս
Լիանա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Լրագրության 3-րդ կուրս

Լավագույն էսսեների շարքից

Մանկավարժության ամբիոնը մեդիագրագիտության շաբաթի շրջանակներում կազմակերպել էր էսսեների մրցույթ, որը լրացրել էր վերոհիշյալ թեմայով դասախոսությունների շարքը:

Համալսարանական դահլիճում Մանկավարժության ամբիոնի դոցենտ Արուսյակ Հովհաննիսյանը ներկայացրեց պատմական ակնարկ մեդիագրագիտության մասին, ապա տեղեկացրեց, որ ուսանողներին հանձնարարվել է գրել էսսե՝ պարզելու ուսանողների՝ մեդիագրագիտության վերաբերյալ գիտելիքների սահմանը, բացահայտելու ուսանողների ներքին ստեղծագործական հնարավորությունները, ընդունակությունները, ինչպես նաև վերլուծելու և քննադատական մտածողության կարողությունները: Համալսարանի 10 ֆակուլտետների 311 ուսանող մասնակցել էր նախաձեռնությանը: Մանկավարժության ամբիոնի ղեկավար, հանձնաժողովի նախագահ Աիդա Թոփուզյանի գլխավորությամբ ընտրվել էր 12 լավագույն աշխատանք, թեև, ինչպես նշեցին դասախոսները, բոլոր աշխատանքներն էլ իրականում ինքնատիպ էին:

Լավագույն ճանաչված էսսեների հեղինակները ներկայացրին իրենց էսսեները ուսանողական և դասախոսական հանրությանը:

Ստորև ներկայացնում ենք նրանցից մի քանիսը:

ԵՍ ԹՎԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՄ

Ժամանակակից աշխարհում մենք մշտապես շրջապատված ենք տեղեկատվությամբ և մեդիայով: Մեդիան՝ տեղեկություններից մինչև սոցիալական ցանցեր, դարձել է առօրյա կյանքի մի մասը, և հայտնվել է ամենատարբեր մասնագետների ուշադրության կենտրոնում:

Համացանցի հասանելիությունը և մատչելիությունը, ըստ էության, նոր էջ բացեցին քաղաքացու և մեդիայի հարաբերություններում:

Ինչպես նշում է ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր կայքում՝ «Տեղեկացված քաղաքացիները կարող են ավելի խորքային և ակտիվ մասնակցություն ունենալ իրենց հասարակություններում որոշումների կայացման գործընթացներին: Մեդիայի դերակատարության հիմքում ընկած է մարդկանց հզորացումը և քաղաքացիության ամրապնդումը...»:

21-րդ դարի ամենահզոր հայտնագործությունը ոչ թե արհեստական բանականությունն է, այլ մարդկային միտքը՝ հարմարված նոր միջավայրին: Ես այդ աշխարհի մի մասն եմ՝ թվային հասարակության քաղաքացի, որտեղ ճշմարտությունը պահանջում է գիտակցություն, իսկ գիտակցությունը՝ մեդիագրագիտություն:

Թվային հասարակության անդամ լինելը նաև ստեղծագործելու հնարավորություն է: Մի քանի տող, մի լուսանկար կամ ձայնագրություն կարող են հասնել հազարավոր մարդկանց: Յուրաքանչյուրս այսօր միաժամանակ և՛ սպառող ենք, և՛ ստեղծող: Թվային միջավայրը վերացնում է սահմանները՝ ազգերի, լեզուների, նույնիսկ սերունդների միջև: Այն, ինչ ես գրում եմ հիմա, կարող է կարդացվել աշխարհի մյուս ծայրում՝ առանց արգելքների:

Այնուամենայնիվ, թվային ազատությունը նաև փորձություն է. արդյո՞ք մենք տիրապետում ենք նրան, թե՞ նա՝ մեզ: Երբեմն ես ինձ հարց եմ տալիս՝ արդյո՞ք ես եմ ընտրում, թե ինչ կարդալ, դիտել կամ լսել, թե՞ ալգորիթմներն են ընտրում ինձ համար: Թվային հասարակության մեջ ազատ լինելը նշանակում է՝ գիտակցել այդ սահմանը և չկորցնել սեփական մտածողության ձայնը:

Այսօր, երբ մեր կյանքի մեծ մասն անցնում է թվային տարածքում, նեթիկետը՝ (թվային էթիկա + էթիկետ), դառնում է նույնքան կարևոր, որքան իրական շփման կանոնները:

Որպես թվային հասարակության պատասխանատու քաղաքացիներ՝ շատ կարևոր է նեթիկետի իմացությունն ու պահպանումը: Այն նպաստում է հարգալից, անվտանգ և առողջ հաղորդակցությանը՝ թե՛ կրթական, թե՛ մասնագիտական, թե՛ առօրյա ոլորտներում:

Եվ այսպես. նեթիկետի հիմնական սկզբունքներն են՝

- ❒ Հարգի՛ր մյուսներին
- ❒ Մի՛ տարածիր ապատեղեկատվություն
- ❒ Պահպանի՛ր անձնական տվյալների գաղտնիությունը
- ❒ Խուսափի՛ր վիրավորական մեկնաբանություններից
- ❒ Հարգի՛ր հեղինակային իրավունքները:

Թվային աշխարհում տարածված են նաև դավադրության տեսությունները՝ պատմություններ, որոնք միայն արտաքինից են հիշեցնում գիտական մտածողություն: Դրանք առավել ակտիվորեն տարածվում են այն ժամանակ, երբ հասարակությունը գտնվում է ճգնաժամի մեջ, երբ մարդիկ փնտրում են պարզ բացատրություններ բարդ իրադարձությունների համար: Դավադրական մտածողությունը խեղաթյուրում է փաստերը, նաև շոյում է մարդու ինքնավստահությունը:

Այստեղ է, որ մեդիագրագիտությունը դառնում է իմ ամենակարևոր զենքը՝ պաշտպանելով իմ միտքը: Այն ինձ սովորեցնում է հարցեր տալ, ստուգել աղբյուրները, տարբերել փաստը կարծիքից և ճանաչել մանիպուլյացիաները:

Թվային աշխարհը միաժամանակ հրաշք է և փորձություն: Այն տալիս է անսահման ազատություն՝ ստեղծելու, սովորելու, զարգանալու համար, բայց պահանջում է նույնքան մեծ պատասխանատվություն: Ես կարող եմ ազդել ուրիշների կարծիքների վրա, ինչպես նրանք՝ ինձ վրա: Եվ այդ փոխազդեցության մեջ մեդիագրագիտությունը դառնում է մեր համատեղ լեզուն՝ ապահովելով հավասարակշռություն ազատության և ճշմարտության միջև:

Ամփոփելով, ուզում եմ նշել, որ լինել թվային հասարակության պատասխանատու քաղաքացի՝ նշանակում է մտածել քննադատաբար, ստուգել աղբյուրները, ճանաչել մանիպուլյացիաները, պահպանել նեթիկետի կանոնները: Թվային հասարակությունում մեդիագրագետ մարդը դառնում է գիտակից քաղաքացի, որն ինքը ձևավորում է տեղեկատվական առողջ և բարեկիրթ միջավայրը, ոչ թե պարզապես ապրում դրա մեջ:

Որպես սկզբնական կրթության օղակի ապագա ուսուցիչ՝ ինձ համար առավել կարևոր և առանցքային է լինել տեղեկացված, լինել մեդիագրագետ, որպեսզի կրթեմ և դաստիարակեմ թվային միջավայրի պատասխանատու և գիտակից քաղաքացիներ:

Արուս ԱՅՎԱԶՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետ
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, մագիստրատուրայի 1-ին կուրս

Մեդիագրագիտության շաբաթը Մանկավարժականում

ԵՍ ԹՎԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՂԱՔԱՑԻ ԵՄ

Հազարամյակներ առաջ, երբ գիրը ծնվեց իբրև մարդկային գիտակցության ծառա, մարդը դեռ չէր էլ պատկերացնում, որ մի օր իր ստեղծած նշաններն ու թվերը կարող են դառնալ նոր իրականության տերերը:

Եփրատի հովտում շումեր գյուտարարները սկսեցին իրենց մտքերը փորագրել կավե սալիկների վրա՝ տվյալների մշակումը տեղափոխելով մարդու ուղեղից դուրս: Այդ գործընթացը, սկսված հինգ հազար տարի առաջ, իր գագաթնակետին հասավ այսօր՝ Սիլիկոնյան հովտում, որտեղ մարդկային միտքը թվերի ու ալգորիթմների մեջ է ապրում:

Ես ապրում եմ մի իրականության մեջ, որտեղ ամեն ինչ թվայնացված է: Առավոտյան արթնանում եմ հեռախոսի ազդանշանից, օրվա ընթացքում գրում եմ տասնյակ հաղորդագրություններ, ստանում նամակներ, արձագանքներ, «հավանումներ»:

Մի ժամանակ մարդիկ նամակ էին գրում միայն այն դեպքում, երբ ասելիքն իսկապես կարևոր էր: Նրանք մտածում էին՝ ինչ են գրում և ինչպես են դա ձևակերպում: Այսօր ես մեկ րոպեում կարող եմ ուղարկել հաղորդագրություն աշխարհի մյուս կողմում գտնվողին և նույն արագությամբ ստանալ պատասխան: Թվում է՝ խնայում եմ ժամանակ, բայց արդյո՞ք ավելի հանգիստ եմ ապրում: Ցավոք՝ ոչ: Թվային հարմարությունը մեզ սովորեցրեց արագություն, բայց խլեց մեր ներքին անդորրը:

Մենք ստեղծեցինք սարքեր, որոնք պիտի կյանքը հեշտացնեին՝ լվացքի մեքենա, բջջային հեռախոս, համակարգիչ, էլեկտրոնային փոստ: Սակայն փոխարենը սկսեցինք ապրել ավելի արագ, ավելի լարված և երբեմն՝ ավելի դատարկ: Այստեղ է, որ սկսվում է իմ պատասխանատվությունը՝ թվային հասարակության անդամի պատասխանատվությունը: Պատասխանատու լինելը նշանակում է ոչ միայն տեխնոլոգիան ճիշտ օգտագործել,

այլև գիտակցել խոսքի, արարքի ու ազդեցության ուժը: Եթե նախկինում մարդը մտածում էր նախքան թղթի վրա գրելն, այսօր ես պետք է մտածեմ նախքան «ուղարկել» կոճակը սեղմելը:

Բայց թվային դարը կանգ չի առնում: Արդեն դառնում է իրականություն այն փաստը, երբ արհեստական բանականությունը կարող է գերազանցել մարդուն: Հնարավոր է, որ այն ոլորտներում, որոնք բանական էակին դարձրին աշխարհի տիրակալ, այժմ գերիշխեն մեքենաները՝ մարդկային մտածողությունն ու կենդանի շփումը մղելով ետին պլան: Այդ իսկ պատճառով ես հավատում եմ, որ ապագան կպահպանվի միայն այն դեպքում, եթե մենք սովորենք պատասխանատվությամբ կառավարել մեր ստեղծած տեխնոլոգիաները:

Թվային հասարակության պատասխանատու անդամ լինելը նշանակում է չվախենալ նորարարությունից, բայց նաև չկորցնել մարդկայնությունը: Այսօր գիտությունը մեզ տալիս է անսահման հնարավորություններ՝ գենային ինժեներիայից մինչև կիբորգներ ու ոչ կենսաբանական կյանքեր: Բայց եթե չկարողանանք վերահսկել մեր իսկ ստեղծած ուժը, կկորցնենք մեզ՝ որպես մարդ:

Պատասխանատու թվային քաղաքացի լինելը նշանակում է հիշել, որ ոչ մի տեխնոլոգիա չի կարող փոխարինել մարդկային խղճին, մտածողությանը և սիրելու կարողությանը:

Ես ուզում եմ լինել այն մարդը, որը տեխնոլոգիաներն օգտագործում է իմաստով, ոչ թե իմաստը կորցնում տեխնոլոգիաների պատճառով: Ով չի ընկնում արագության թակարդը, այլ կառավարում է այն: Ով գիտի՝ թվային աշխարհում ազատությունը չափվում է ոչ թե անսահման հնարավորություններով, այլ գիտակցված ընտրությամբ:

Ես գիտեմ, որ այս թվային դարում, անգամ այդ արհեստական բանականության և տեխնոլոգիաների մեջ էլ մարդն է միակ կենտրոնը: Ուստի, եզրափակելով կարող եմ ասել, որ ես թվային հասարակության պատասխանատու անդամ եմ, որովհետև ուզում եմ ապրել ոչ թե համակարգերի ստեղծած աշխարհում, այլ այն աշխարհում, որտեղ մարդը մնում է ստեղծողը, ոչ թե ստեղծվածը:

Էմմա ՍԱՖԱՐՅԱՆ
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ
Սոցիալական մանկավարժություն մագիստրատուրայի 1-ին կուրս

«Թվային աշխարհում պատասխանատու լինել՝ նշանակում է պահպանել մարդկայնությունը՝ նույնիսկ այն ժամանակ, երբ ոչ ոք չի հետևում քեզ»:

21-րդ դարը մարդկության պատմության ամենաթվայնացված ժամանակաշրջանն է. տեղեկատվական տեխնոլոգիաները ոչ միայն փոխեցին մարդկանց շփման, աշխատանքի և սովորելու ձևերը, այլև ձևավորեցին մի նոր՝ թվային հասարակություն: Այս հասարակությունում տեղեկատվությունը դարձել է հիմնական արժեք, իսկ թվային հմտությունները՝ հաջողության բանալին:

Մենք ապրում ենք մի միջավայրում, որտեղ յուրաքանչյուր գործողություն՝ սկսած սովորելուց մինչև առևտուր անելն ու ընկերների հետ շփվելը, կապված է թվային տեխնոլոգիաների հետ: Սակայն թվային հասարակության լիարժեք անդամ լինելը չի նշանակում պարզապես օգտվել սոցցանցերից կամ համակարգչից: Դա նաև նշանակում է՝ լինել պատասխանատու, գիտակցել սեփական գործողությունների ազդեցությունը թվային միջավայրում, պաշտպանել սեփական և ուրիշների տվյալները, հարգել թվային էթիկան և նպաստել առողջ տեղեկատվական մշակույթի ձևավորմանը:

Պատասխանատու թվային վարքագիծը ենթադրում է, որ յուրաքանչյուր օգտատեր գիտակցում է իր գործողությունների հետևանքները և պահպանում է էթիկական նորմերն առցանց միջավայրում:

Այսօր թվային աշխարհը ոչ միայն նորարարական տեխնոլոգիաների ամբողջություն է, այլև մարդկային նոր միջավայր, որն արմատապես փոխում է մեր հաղորդակցման, ուսուցման, փոխազդեցության և կառավարման եղանակները: Ինչպես գրում է Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ն.Գ. Օսիպովան. «Այսօր թվային տեխնոլոգիաները ներդրված են մարդկանց առօրյա կյանքում՝ դրանք առկա են յուրաքանչյուր ժամանակակից տանը, հաստատությունում, ձեռնարկությունում, գործարանում...»:

Թվային դարաշրջանում յուրաքանչյուր անձ դարձել է ոչ միայն տեղեկատվության սպառող, այլև դրա ստեղծող: Այս պայմաններում առավել քան երբևէ կարևոր է ձևավորել պատասխանատու թվային վարքագիծ: Պատասխանատու լինել՝ նշանակում է գիտակցել, որ առցանց միջավայրում մեր խոսքը, հրապարակումը կամ նույնիսկ «հավանումը» կարող է ազդեցություն ունենալ մյուսների վրա: Յուրաքանչյուր մեկնաբանություն կարող է կամ կառուցել, կամ խարխլել ինչ-որ մեկի արժանապատվությունը: Հետևաբար՝ թվային հարթակներում անհրաժեշտ է պահպանել հարգանքը, խուսափել վիրավորանքներից և հոգատար լինել ուրիշների նկատմամբ: Թվային պատասխանատվությունը ոչ միայն տեխնիկական, այլև բարոյական վարքագծի հարց է:

Բացի այդ, թվային հասարակությունում առանց տեղեկատվական գրագիտության անհնար է ճիշտ կողմնորոշվել: Ժամանակակից մարդը պետք է կարողանա տարբերել ճշմարիտ և կեղծ տեղեկատվությունը, վերլուծել աղբյուրները և խուսափել ապատեղեկատվության տարածումից: Մեդիագրագիտությունը դարձյալ պատասխանատվության դրսևորում է. այն օգնում է մեզ պաշտպանվել մանիպուլյացիաներից և միաժամանակ չդառնալ կեղծ լուրերի տարածող: Այսօր, երբ համացանցը լի է ստահոդ աղբյուրներով, յուրաքանչյուր գիտակցված օգտատեր պետք է դառնա ինֆորմացիոն «ֆիլտր»՝ նախքան որևէ բան կիսելը՝ ստուգելով դրա հավաստիությունը: Քանզի ներկա ժամանակահատվածում նույնիսկ մեկ տող տեղեկատվական կեղծիքը կարող է անգամ պատերազմների պատճառ դառնալ:

Մյուս կողմից, թվային հասարակությունում կարևոր է նաև անվտանգության մշակույթի ձևավորումը: Մենք հաճախ ենք թողնում մեր տվյալները տարբեր կայքերում, հավելվածներում կամ սոցիալական հարթակներում՝ առանց հասկանալու դրանց վտանգները: Անձնական տվյալների պաշտպանությունը, գաղտնաբառերի ճիշտ օգտագործումը, վստահելի աղբյուրներից օգտվելը՝ սրանք բոլորը ոչ միայն տեխնիկական սովորություններ են, այլև թվային էթիկայի էական մասեր: Թվային աշխարհում անվտանգությունը դառնում է ինքնապաշտպանության ձև, որը պահանջում է թե՛ զգոնություն, թե՛ պատասխանատվություն:

Սակայն, թվային պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն սեփական անվտանգության կամ բարոյական վարքագծով: Այն ներառում է նաև տեխնոլոգիաների դրական և նպատակային օգտագործումը: Թվային հասարակության լիարժեք անդամը նա է, ով տեխնոլոգիաներն օգտագործում է գիտելիք ստանալու, ստեղծագործելու և ուրիշներին օգնելու համար: Սոցիալական ցանցերը կարող են դառնալ ոչ թե պարզապես ժամանցի, այլ կրթական և հասարակական նախաձեռնությունների տարածման հարթակ: Այս առումով յուրաքանչյուր օգտատեր կարող է դառնալ փոփոխության գործիք՝ տարածելով օգտակար, կրթական և բարոյական բովանդակություն:

Ավելի քան երբևէ, թվային դարաշրջանը մեզ հիշեցնում է, որ տեխնոլոգիաները չեն կարող փոխարինել մարդկային արժեքներին: Թվային հասարակության զարգացումը հնարավոր չէ առանց հարգանքի, ազնվության և փոխըմբռնման: Մենք պետք է պահպանենք մարդկայնությունը նույնիսկ այն ժամանակ, երբ էկրանի մյուս կողմում մարդ չենք տեսնում: Թվային էթիկան ոչ միայն վարքականոնների հավաքածու է, այլ վերաբերմունք՝ ուրիշների հանդեպ: Հետևաբար՝ թվային պատասխանատու քաղաքացու կերպարը ձևավորվում է այն ժամանակ, երբ տեխնոլոգիան օգտագործվում է մարդու, ոչ թե շահի կամ վարկանիշի համար:

Այսպիսով, թվային հասարակության մեջ պատասխանատվությունը դարձել է ոչ պակաս կարևոր, քան ֆիզիկական կյանքում վարքագծի նորմերը: Թվային միջավայրը մեր կյանքի անբաժան մասն է, և այնտեղ ճիշտ ու գիտակցված գործելը յուրաքանչյուրի պարտքն է: Պատասխանատու թվային քաղաքացի լինելը նշանակում է՝ հարգել ուրիշների կարծիքը, չտարածել կեղծ տեղեկություններ, պաշտպանել սեփական և այլոց տվյալները, ինչպես նաև օգտագործել տեխնոլոգիաները օգտակար նպատակներով:

Իմ կարծիքով, թվային աշխարհը մեզ տալիս է մեծ հնարավորություններ, սակայն դրանց ճիշտ օգտագործման համար անհրաժեշտ է ներքին մշակույթ և ինքնակարգապահություն: Ես կարծում եմ, որ թվային հասարակության մեջ ամենակարևոր հատկանիշը մարդ մնալն է՝ ունենալով հարգանք, բարություն և ազնվություն նույնիսկ էկրանների հետևում: Ես փորձում եմ իմ առցանց ներկայությամբ լինել օրինակելի և դրական ազդեցություն ունեցող օգտատեր՝ հասկանալով, որ յուրաքանչյուր գործողություն կարող է ձևավորել ոչ միայն իմ թվային պատկերը, այլև ընդհանուր հասարակության արժեքները:

Հովհաննես ԽԱՉԻԲԱԲՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ, Պատմություն Բակալավր 1-ին կուրս

Համարի նյութերը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ